

2 մայիսի 2012թ.

Քննարկվեց քաղաքացի Կիմ Ստեփանյանի « Նախագահին հասցեագրված դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410419 վարչական ակտի դեմ:

« ԿԱ ՊԵԿ աշխատակիցների կողմից 21.03.2012թ-ին կազմվել է թիվ 1410419 արձանագրությունը, որում մասնավորապես արձանագրվել է, որ ֆիզիկական անձ Կիմ Ստեփանյանը (ք.Երևան, Ռուբինյանց 1, բն. 6) Նոր Նորքի վարչական շրջանում իրականացրել է ավտոկանգառային ձեռնարկատիրական գործունեություն առանց պետական գրանցման (ապօրինի): Ըստ Կիմ Ստեփանյանի հայտարարության, գործունեությամբ զբաղվում է մոտ 2 ամիս, համախառն միջին եկամուտը կազմում է մոտ 54.000 դրամ:

Սույն խախտումն առաջացնում է պատասխանատվություն համաձայն «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի համախառն եկամտի 50%-ի չափով՝ ոչ պակաս 200.000 դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հարկերի մասին» « օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով « ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 14-րդ բաժնի պետը 27.03.2012թ-ին ընդունել է թիվ 1410419 վարչական ակտը (այսուհետ նաև վարչական ակտ), որով կիրառվել են «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածի և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված պատասխանատվության միջոցները: Արդյունքում վարչական ակտով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 260.000 դրամ, այդ թվում՝ «Հարկերի մասին» « օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված տուգանք 200.000 դրամ, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված տուգանք 60.000 դրամ:

Քաղաքացի Կիմ Ստեփանյանի « Նախագահին հասցեագրված գանգատում մասնավորապես նշված է.

Արդեն մոտ տաս տարի է աշխատում եմ Երևանի «Ավտոբեռնիչ» ԲԲԲ-ում որպես պահակ: Ստացածս աշխատավարձը թռչակիս հետ հազիվ է բավականացնում ծայրը-ծայրին հասցնելու, երբեմն էլ երեխաներիս ու թոճիկներիս որևէ հարցում օգնելու համար:

Սույն թվականի մարտի 19-ին ինձ մոտ եկավ մի երիտասարդ ու խնդրեց, որ գիշերը իր մեքենան կայանի ինձ վստահված տարածքում: Ելնելով զուտ մարդասիրական տեսակետից առանց որևէ կասկածի թույլ տվեցի:

Առավոտյան ժամը 9-ին վերը նշված երիտասարդն ընկերոջ հետ մտավ պահակակետ և իմ արած լավության դիմաց սեղանիս դրեց 300 դրամ: Նշեմ, որ տնօրինությունն ինձ թույլ չի տվել մեր տարածքում օտար մեքենա կայանելու: Հետո մի հոգի էլ եկավ և նրանք ինձ համոզեցին ստորագրել մի թուղթ, որի համաձայն իբր ես թույլ եմ տվել վերջին մի երկու ամսվա ընթացքում երկու մեքենա կայանի ինձ վստահված տարածքում: Ես առանց հասկանալու, թե դա ինչ հետևանք կարող է ունենալ՝ ստորագրեցի:

Դրանից երեք օր հետո, եկան նույն մարդիկ համապատասխան ակտով, որտեղ նշված էր, թե իբր ես զբաղվում եմ ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ և պետք է 260.000 դրամ տույժ ու տուգանք վճարեմ: Ես իմացա, որ նրանք Նոր Նորքի հարկային օպեր բաժնից են: Բնականաբար ես հրաժարվեցի այդ ակտը ստորագրելուց: Այստեղ նրանք ինձ վստահեցրին, որ նշված ակտը կուղարկեն փոստով:

Ես մտածում էի, որ խախտել եմ աշխատանքային կարգապահությունը, որի համար ինձ նկատողություն կանեն կամ էլ ուղղակի կազատեն աշխատանքից: Բայց ակտը ձեռնարկատիրական գործունեությունն ուր, ես ուր: 82 տարեկան եմ, ամբողջ կյանքս բանվոր եմ աշխատել, օրենք չեմ խախտել: Դուրս է գալիս, որ ես ոչ թե գիշերային պահակ եմ, այլ

ձեռնարկատեր, իմ գործունեությունն էլ ոչ թե պահակությունն է, այլ ապօրինի ձեռնարկատիրությունը: Եվ եթե դա այդպես է, պետք է աշխատեր անմեղության կանխավարկածը: Ես որտեղից պետք է իմանայի, որ մեկ մեքենայի կայանելն իմ կողմից պահպանվող տարածքում, իմ աշխատանքային ժամին, որակավորվում է որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն և տույժ ու տուգանքի չափն էլ 260.000 դրամ է:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Կիմ Ստեփանյանի և վերոգրյալ արձանագրությունը կազմած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով գանգատին առնչվող նյութերը և ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

« քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է: Այսինքն, գործունեությունը որպես ձեռնարկատիրական որակելու համար պարտադիր պայման է հանդիսանում շահույթ ստանալու նպատակի առկայությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է հիմնավորվեր քաղաքացի Կիմ Ստեփանյանի կողմից շահույթ ստանալու նպատակով հիշատակված գործունեությամբ զբաղվելու փաստը: Այսինքն, քաղաքացի Կիմ Ստեփանյանի կողմից ապօրինի ձեռնարկատիրությամբ զբաղվելու հանգամանքը հաստատված համարելու համար պետք է պարզվեր և ապացուցվեր, որ Կիմ Ստեփանյանը գործունեությունն իրականացրել է շահույթ ստանալու նպատակով:

Հարկ է նշել, որ ձեռնարկատիրական գործունեության հասկացության մեկնաբանությունը տվել է նաև « վճռաբեկ դատարանն իր թիվ 1161(ՏԴ) քաղաքացիական գործով 01.08.2007 թվականի որոշմամբ: Նշված որոշման մեջ « վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«վճռաբեկ դատարանը գտնում է, որ քաղաքացու կողմից իրականացվող գործունեության բնույթը (այդ թվում նաև՝ ձեռնարկատիրական լինելը) որոշելիս, անհրաժեշտ է օրենքով սահմանված պարտադիր հատկանիշների առկայությունը որոշել մասնավորապես հետևյալ հանգամանքները բացահայտելուց հետո.

1. արդյո՞ք գործունեությունն իրականացվել է անձի նախաձեռնությամբ և կամքով,
2. արդյո՞ք գործունեությունը կրում է պարբերական բնույթ,
3. արդյո՞ք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով,

4. արդյո՞ք գործունեությունն իրականացվում է որպես մասնագիտություն (արհեստ), որի արտաքին դրսևորումներից կարելի է համարել առևտրի իրականացման կամ ծառայությունների մատուցման հատուկ տարածքի (խանութ, սրահ, արհեստանոց, այլ արտադրական տարածք, հատուկ հարմարեցված տրանսպորտային միջոց), տեղեկատվական-գովազդային բնույթի միջոցառումների, ապրանքի մեծ քանակության և տեսականու առկայությունը,

5. արդյո՞ք քաղաքացու տնտեսական գործունեությունը (քաղաքացիաիրավական գործարքը) վերաբերում է նրա անձնական գույքին,

6. այլ առանձնահատուկ հատկանիշներ>:

վերոգրյալից հետևում է, որ անձի գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար անհրաժեշտ է որպեսզի դրանում առկա լինեն « վճռաբեկ դատարանի որոշմամբ նշված բոլոր հանգամանքները:

Քննարկվող դեպքում չի պարզվել և բացահայտվել, թե քաղաքացի Կիմ Ստեփանյանի գործունեության մեջ առկա են արդյոք վերը թվարկված հանգամանքները, թե ոչ:

Կիմ Ստեփանյանի գործունեությունը որակվել է որպես ապօրինի ձեռնարկատիրություն առանց հիմնավոր ապացույցների առկայության:

« քաղաքացիական օրենսգրքի և « վճռաբեկ դատարանի նշված որոշման իմաստով ձեռնարկատիրական գործունեության գլխավոր նպատակներից է հանդիսանում շահույթ

ստանալու նպատակը: Այսինքն, արդյոք գործունեությունն ի սկզբանե իրականացվել է հատկապես շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով, թե ոչ: Նշված հանգամանքը քննարկվող դեպքում չի պարզվել: Ինչից հետևում է, որ խախտվել են <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջները, այն է՝ Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործիբոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործում առկա չեն բավարար ապացույցներ, որոնք կհիմնավորեն, որ Կիմ Ստեփանյանի գործողությունները հետապնդել են շահույթ ստանալու նպատակ: Ավելին, քննարկման ընթացքում չապացուցվեց այն հանգամանքը, որ Կիմ Ստեփանյանը իրականացված գործունեությունից ստացել է շահույթ:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Տվյալ դեպքում Կիմ Ստեփանյանի նկատմամբ ընդունվել է ոչ բարենպաստ վարչական ակտ, հետևապես դրանում տեղ գտած տեղեկությունների ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ առկա չեն բավարար հիմքեր և ապացույցներ քաղաքացի Կիմ Ստեփանյանի գործունեությունը որպես ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն որակելու համար:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 27.03.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410419 վարչական ակտը:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ